Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն Հ.Կարապետյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արագածոտնի մարզի Դավթաշենի Ա. Վարդանյանի անվան
միջնակարգ դպրոցի
IX դասարան

Դասղեկ Կաքավիկ Ասատրյան

2022-2023 ուս. տարի

ԿՐԹԱԿԱՆ -ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը)- IX դասարանում սովորում է 7 աշակերտ՝ 6 տղա և 1 աղջիկ: Հանգիստ դասարան է, աշակերտները կազմակերպված են և պարտաճանաչ, ընկերասեր են, պատրաստակամ արտադասարանական, դասարանական, արտադպրոցական աշխատանքներին: Ակտիվորեն մասնակցում են միջոցառումներին, նախաձեռնող են: Ուսման առաջադիմությունը լավ է:
2. **ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ-** Հետևել աշակերտների ուսման որակի բարձրացմանը, կարգապահությանը, բացակայություններին: Ստեղծել առողջ, ընկերական մթնոլորտ դասարանում և միջդասարանային հարաբերություններում: Սովորեցնել հարգալից լինել միմյանց նկատմամբ, ծնողների, ուսուցիչների և ընդհանրապես մեծերի հանդեպ: Տարբեր միջոցառումների, էքսկուրսիաների միջոցով ամրապնդել սերը բնության, հայրենի գյուղի և հայրենիքի նկատմամբ:
3. **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

   3.1 Հոգևոր դաստիարակություն- Աշակերտների մոտ զարգացնել հոգևոր արժեքների ճանաչումը, հայրենասիրությունը՝ էքսկուրսիաների, զրույցների և տարբեր միջոցառումների միջոցով:

   3.2 Գեղագիտական դաստիարակություն- Կազմակերպել գեղարվեստական գրքերի քննարկումներ, ֆիլմերի դիտում և քննարկում, էքսկուրսիաներ, որոնք կօգնեն աշակերտների մոտ զարգացնել գեղագիտական ճաշակ և մակարդակ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն- Կազմակերպել այցելություններ և հյուրընկալություններ մեր հերոս զինվորների հետ, լսել երգեր, դիտել ֆիլմեր ռազմա-հայրենասիրական թեմաներով։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն- Զրույցներ տանել, որի նպատակը ծանոթացնում է առողջ ապրելակերպին։ Ապահովել աշակերտների մասնակցությունը սպորտային միջոցառումներին։

3.5 Աշխատանքային դաստիարակություն- Հանդիպումներ կազմակերպել տարբեր ոլորտներում աշխատանքային հաջողության հասած անհատների հետ, կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կօգնեն զարգացնել աշակերտների մեջ աշխատասիրությունը՝ թե հոգևոր, թե ֆիզիկական։

3.6 Բնապահպանական դաստիարակություն- Բնապահպանական թեմաներով զրույցներից բացի կազմակերպել միջոցառումներ և էքսկուրսիաներ, որոնք կզարգացնեն հոգատարություն և սեր բնության հանդեպ։

4. **ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ**- Դպրոց-ընտանիք կապը պահպանել ծնողական ժողովների, միջոցառումների, անհատական դարձնել դպրոցի անցուդարձին, որը կօգնի աշակերտների կրթության և դաստիարակության խնդիրները դյուրին լուծել։

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Կազմակերպչական աշխատանքներ	01.09-09.09	դասղեկ, դասարան
2.	Դասագրքերի բաշխում և վարձավճարների գանձում	01.09-30.09	դասղեկ, ծնողներ
3.	Դասարանական ժողով և դասարանի ակտիվի ընտրություն	05.09	դասղեկ, դասարան
4.	Ծնողական ժողով և ծնողկոմիտեի ընտրություն	06.09	դասղեկ, ծնողներ
5.	«Անկախության 30 ամյակ»-ի միջոցառումների մասնակցություն	19.09-21.09	դասղեկ, դասարան, դպրոց
6.	Սեպտեմբերի 27-ին զոհված քաջորդիների հիշատակի մոմավառության մասնակցություն	27.09	դասղեկ, դասարան, դպրոց
7.	Դասարանական ժողով ուսման առաջադիմությունը բարձրացնելու ճանապարհներ որոնելու նպատակով	30.09	դասղեկ, դասարան
8.	Ուսուցչի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում և մասնակցություն	01.10-05.10	դասղեկ, դասարան, դպրոց
9.	Ծնողական ժողով ուսումնական և կարգապահական թեմաներով	06.10	դասղեկ, ծնողներ
10.	Էքսկուրսիա հնագիտական աշխատանքների ուսումնասիրության նպատակներով	15.10	դասղեկ, դասարան
11.	Զրույց «Իմ ապագան» թեմայով	17.10	դասղեկ, դասարան
12.	Զրույց «Իմ դասարանը» թեմայով. Շարադրություն նույն թեմայով, որում կլինեն քննադատություն, առաջարկ, վերլուծություն:	24.10-28.10	դասղեկ, դասարան

13.	«Իմ հերոս» թեմայով շարադրության քննարկում, հանդիպման կազմակերպում	01.11-04.11	դասղեկ, դասարան
14.	Դասարանական ժողով ուսման առաջադիմության թեմաներով	07.11	դասղեկ, դասարան, ծնողներ
15.	Պատի թերթի լույս ընծայում՝ «Աշնան գույներ» խորագրով	14.11-18.11	դասղեկ, դասարան
16.	Կազմակերպել հանդիպում տարբեր ոլորտներում աշխատանքային հաջողությունների հասած (աշխատավորների) մարդկանց հետ	21.11-25.11	դասղեկ, դասարան, դպրոց
17.	Դասարանական ժողով՝ կիսամյակի ամփոփման հարցերի շուրջ	05.12	դասղեկ, դասարան
18.	Ամանորյա միջոցառումներ	19.12-23.12	դասղեկ, դասարան, դպրոց
19.	Ծնողական ժողով՝ առաջին կիսամյակի ամփոփում	20.12	դասղեկ, ծնողներ
20.	Հայոց բանակին նվիրված միջոցառումների մասնակցություն	23.01-27.01	դասղեկ, դասարան, դպրոց
21.	«Տյառն ընդառաջ»-ին նվիրված միջոցառումներ	06.02-10.02	դասղեկ, դասարան, դպրոց
22.	Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներ	01.03-07.03	դասղեկ, դասարան, դպրոց
23.	Միջդասարանային մրցույթ Ն.Զ.Պ.-ից	13.03-17.03	դասղեկ, դասարան, դպրոց
24.	Կազմակերպել էքսկուրսիա պատմամշակութային վայրեր	ապրիլ	դասղեկ, դասարան, դպրոց
25.	Այցելել ծիծեռնակաբերդի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել ցեղասպանության զոհերի հիշատակին	24.04.	դասղեկ, դասարան, դպրոց
26.	Մասնակցել մայիսյան հաղթանակներին նվիրված միջոցառումներին	մայիս	դասղեկ, դասարան, դպրոց
27.	Դասարանական ժողովներ կիսամյակի առաջադիմության հարցերի շուրջ	15.05-19.05	դասղեկ, դասարան
28.	Ծնողական ժողով՝ կիսամյակի արդյունքների ամփոփում	22.05	դասղեկ, ծնողներ
29.	Էքսկուրսիաների կազմակերպում	հունիս	դասղեկ, դասարան, դպրոց